Ճ Շ Տ Ո Ի Մ

Ինչպես հայտնի է, այս տարի, հունիս ամսին, Վեհափառ Հայրապետի՝ Ժընևն այցելության առիթով, համագաղութային հրաժեշտի մեծ ճաշկերույթի ընթացքում, հունիսի 25-ին, կիրակի օրը, ընդհանուր ոգևորության մթնոլորտում, ներկաները ողջունեցին գերաշնորհ տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի հաղորդումն այն մասին, որ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյակի առիթով (1980 թվականի հոկտեմբերին) լոնդոնահայությունը ծրագրել է հուշամեդալներ պատրաստել՝ նվիրված այդ հոբելյանին:

Ընդունելության ժամանակ բազմաթիվ ազգայիններ, ողջունելով այդ նախաձեռնությունը, տեղվույն վրա կարևոր գումարներով արձանագրվել էին, նախօրոք ապահովելու իրենց համար որոշ թվով հուշամեդալներ:

Այսու պարտք ենք համարում կատարել հետևյալ ճշտումը:

Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարների 67-րդ էջում, թյուրիմացաբար, մերոհիշյալ ճաշկերույթի ընթացքում արձանագրված գումարները ներկայացված էին որպես Ժընևում հայ եկեղեցու էկումենիկ կենտրոնի կառուցման ի նպաստ խոստացված գումարներ:

Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի՝ ճաշկերույթի ժամանակ հայտարարած հարյուր հազար դոլլարի հատկացումը միայն վերաբերում է Ժընևի հայ եկեղեցու էկումենիկ կենտրոնի շինության ֆոնդին:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ